Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-720[21]-23.11.2023-ԱՍ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Փախստականների և ապաստանի մասին» 2008 թվականի նոյեմբերի 27-ի ՀՕ-211-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 23-րդ հոդվածի 1-ին մասում «խեղման» բառը փոխարինել «վնասվածքի» բառով:

Հոդված 2. Օրենքի 30-րդ հոդվածի 11-րդ մասում և 30.1-ին հոդվածի 9-րդ մասում «առաջին խմբի հաշմանդամները» բառերը փոխարինել «առաջին խմբի հաշմանդամություն ունեցող անձինք կամ ֆունկցիոնալության խորը աստիճանի սահմանափակում ունեցող անձինք» բառերով:

Հոդված 3. Օրենքի 30-րդ հոդվածի 11-րդ մասում «հաշմանդամության վկայականը կամ վկայականի» բառերը փոխարինել «հաշմանդամության վերաբերյալ բժշկասոցիալական փորձաքննական որոշումը կամ անձի ֆունկցիոնալության գնահատման որոշումը (վարչական ակտը) կամ դրանց» բառերը.

Հոդված 4. Օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետում «հաշմանդամ» բառը փոխարինել «հաշմանդամություն ունեցող» բառերով:

Հոդված 5. Օրենքում գործածվող՝ փախստականի աշխատանքային վնասվածք ստանալու դեպքում սահմանված դրույթների գործողությունները տարածվում են նաև մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը աշխատանքային խեղում ստացած փախստականի վրա: